## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» փետրվարի 2017թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄհՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի փետրվարի 20-ին, ժամը 10:30-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն, հեռախոսահամարը |
|---|---|
| «ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | ք.Երևան, Բագրատունյաց 27/1, հեռ. (091) 417565 |
| «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՐ ԷՄ» ՍՊԸ | ք. Երևան, Իսակովի փ. 42/4 57, հեռ. (093) 668595 |
| «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ | ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ.,45 շ.,42 բն., հեռ. (010) 250588 |
| «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ | ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60, հեռ. (010) 586060 |
| «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 18/2, հեռ. (010) 544346 |
| «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ | ք. Երևան. Մարգարյան 2-րդ նրբ.,3 շենք, բն.15, հեռ. (010) 540545 |

3. Համակարգում 09.02.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

4. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. փետրվարի 21-ին, ժամը՝ 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Խորեն Պետրոսյան

Կարեն Մելքոնյան

Արթուր Թամրազյան

Էլլադա Արզաքանյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան